թիւնները համապատասխան անդրադարձում չունենային վրաց ժողովրդական զանգուածների վրայ։ Այս զանգուածները, որ երկար ու ձիգ դարերի ընթացքին միշտ եղբայրական վերաբերմունք են ունեցել դէպի հայ ժողովուրդը եւ մանաւանդ Վրաստան ապաստանած հայկական հատուածները, այժմս ըստ երեւոյթին շատ էլ չեն կառչում վաղեմի բարեկամութեան եւ մտերմութեան աւանդներին։

Վրաստանի ապստամբութիւնը ճնշելու գործում, իր սխրագործութիւններով աչքի էր ընկել այսպէս կոչուած «չեկիստական դումարտակը», որ ինչպէս մեզ հաղորդւում էին վրացական աղբիւրներից, գերազանցօրէն բաղկացած էր հայերից։ Ապստամբութիւնից առաջ եւ յետոյ էլ Վրաստանի չեկաներում գլխաւոր դերակատարները հայերն են եղել, համաձայն նոյն աղբիւրներից ստացուած տեղեկութիւնների։ Եթէ այս տեղեկութիւնները ճիշդ են, կասկած չկայ, որ ոճրագործ բոլշեւիկները դիւային յղացումն են ունեցել ոչ միայն ճնշել վրացիներին, այլ եւ ճնշումը կատարել հայերի ձեռքով, որպէսզի նրանց միջեւ արեան թշնամութիւն ստեղծուի, եւ նրանք չկարողանան, յարմար բոպէին, միացեալ ճակատով դուրս գալ ընդհանուր թշնամու՝ բոլշեւիկեան բռնապետութեան դէմ։

Սա այնքա՞ն պարզ, այնքա՞ն հասկանալի մի խաղ էր, որ վրաց ժողովուրդը, իր առողջ բնազդով եւ դատողութեամբ, իսկոյն պէտք է ըմբռնէր. ճիշդ այնպէս, ինչպէս որ ժամանակին հայ ժողովուրդն էր ըմբռնում ցարական սատրապների դիւային խաղը, երբ նրանք Նակաչիձէներին, Տակայշվիլիներին, Լօլաձէներին եւ վրացական անուններ կրող ուրիշ մանր ու խոշոր դահիճներն էին առաջ քաշում՝ հայկական ջարդեր կազմակերպելու կամ հայ յեղափոխական շարժումները խեղդելու համար։ Բայց որովհետեւ վրաց ժողովրդի միտքը բաւական թունաւորուած էր իր հին եւ նոր վարիչների մշակած հակահայկական ոգրամադրութիւններով՝ նա հայ չեկիստների վայրագութեանց համար պատասխանատու էր նկատում հայ ժողովուրդը՝ առանց նոյնիսկ հաշուի առնելու, թէ նոյն այդ չեկիստների ձեռքից ինքը հայ ժողովուրդը ինչքա՞ն էր տառապել եւ արիւնոտուել*)...

Թէ այս օրինակ տրամադրութիւնները ինչքա՞ն անախորժ շփումներ կարող են առաջաբերել տիրող վրաց ժողովրդի եւ վիրահայ ազգային փոքրամասնութեան միջեւ՝ դառնացընելով վերջինիս կեանքը, այդ հասկանալի պէտք է լինի ամէնքի համար։ Մենք խօսում ենք միայն անախորժ շփումների մասին. սակայն, վրացական շրջանակներից, աւելի ծանրակշիռ հաւանականութիւնների ակնարկներ եւս լսում ենք յաճախ...

* * *

Ահա այս է վիրահայ ժողովրդի վիճակը ներկայիս։ Եթէ հանրապետական վարչութեան օրօք նա իրաւազրկուած էր իբրեւ ազգային փոքրամասնութիւն իր մշակոյթային եւ ինքնավարական պահանջների մէջ եւ մինչեւ իսկ բացայայտ հալածանքների էր ենթարկւում «յարմար» առթիւ՝ այժմ, Խորհրդային վարչութեան տակ, նա կատարելապէս անտեսւում է իբրեւ ազգային փոքրամասնութիւն եւ, հետեւողական քաղաքականութեամբ, յետ մղւում պետական եւ հանրային կեանքի բոլոր մարզերից։

Ի՞նչ պէտք է անել այս վիճակը դարմանելու համար։ Ի՞նչ պէտք է անել, որ վիրահայ ազգային փոքրամասնութիւնը փոխանակ կնճռոտելու Հայաստանի եւ Վրաստանի յարաբերութիւնները՝ շաղկապող օղակ դառնայ նրանց միջեւ՝ մնալով միաժամանակ կատարելապէս օրինապահ, կատարելապէս պարտաճանաչ հանդէպ Վրաստանի եւ նրա իշխանութեան։

Այս հարցերի դոհացուցիչ պատասխանը եւս մենք գտնում ենք Ժորդանիայի մօտ։ — Իմ դէմ ունեցած բանավէճի մէջ, Ժորդանիան հետեւեալ տեսակէտներն է արտայայտում ազգային փոքրամասնութիւնների հարցի վերաբերեալ։

---

*) Վրաց Ժողովրդի այս տրամադրութեան մասին մի կարեւոր վաւերագիր ունինք մեր տրամադրութեան տակ, որ առայժմ անյարմար ենք նկատում հրապարակ հանել։

Ա. Ջ.